Արձանագրություն N 2
«ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-23/04» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք.Ճամբարակ,Գ.Նժդեհի 125 **«19» «05» 2023թ.**
ժամը 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Արտակ Ստեփանյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Ս.Ավալյան/ԳԱ/,Վ.Մխիթարյան/ԳԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Մարկոսյան/ԳՀ/

1.Տեղեկություններ «ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-23/04» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի

(Արտակ Ստեփանյան)

Ընդունել ի գիտություն,որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2023 թվականի մայիսի 19-ին, ժամը 16:30-ին:
Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Տեղեկություններ «ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-23/04» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Արտակ Ստեփանյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել 3/ երեք / մասնակից/ներ/

h/h	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	«Ա Գ Շին» ՍՊԸ	Գեղարք.մարզ,գ.Վ.Գետաշեն Աթաղ,3 փ,տ.7/2
2	«Շինտեխնիկա» ՍՊԸ	Գեղարք.մարզ,ք.Ճամբարակ,Տ.Մեծի 7,շ 9
3	«Վիռա» ՍՊԸ	Գեղարք.մարզ,գ.Մարտունի 6 փ,տ.19

Ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Արտակ Ստեփանյան)

3.1 Գնանշման հարցման գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկ/ները/.

h/h	Մասնակցի անվանումը	Աշխատանքի անվանումը	Աշխատանքի նախահաշվային գինը	Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ	Առաջարկված գին՝ ԱԱՀ	Առաջարկված գինը՝ ԱԱՀ-ով
1	«Շինտեխնիկա» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Թթուջուր բնակավայրի համայնքային կենտրոնի վերանորոգման աշխատանքներ	40 249 737	33 041 420	6 608 284	39 649 704
2	«Ա Գ Շին» ՍՊԸ			33 431 444	6 686 289	40 117 733
3	«Վիռա» ՍՊԸ			33 541 448	---------	33 541 448

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4.Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին,դրանց համապատասխան կազմված լինելու և հայտ/երի/ գնահատման մասին:

(Արտակ Ստեփանյան)

Հանձնաժողովն արձանագրեց,որ՝

Մասնակիցը/ները/ հայտը/երը/ կազմել և ներկայացրել է /են/ **ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-23/04** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

Մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտում/երում/ ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին,բացառությամբ՝

« Շինտեխնիկա »ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են անհամապատասխանություններ ներկայացված գնանշման հարցմանը մասնակցելու փաթեթի մեջ,կցված չէ հրավերով սահմանված կարգով հայտի ապահովումը,որը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է գնման գնի հինգ տոկոսին: Այս խախտումը արձանագրվել է գնահատող հանձնաժողովի կողմից և գնահատվել է անբավարար:

« Վիռա »ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են անհամապատասխանություններ ներկայացված գնանշման հարցմանը մասնակցելու փաթեթի մեջ,կցված չէ հրավերով սահմանված կարգով հայտի ապահովումը,որը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է գնման գնի հինգ տոկոսին: Այս խախտումը արձանագրվել է գնահատող հանձնաժողովի կողմից և գնահատվել է անբավարար:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով՝

- հանձնաժողովը մերժում է այն հայտերը,որոնցում բացակայում է գնային առաջարկը,կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Որոշվեց՝

- **«Շինտեխնիկա»ՍՊԸ-ի,« ՎԻՌԱ »ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար:**
- **« Ա Գ Շին » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:**

_____

(Արտակ Ստեփանյան)

h/h	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանությունը	Հայտի գնահատականը
1	«Ա Գ Շին» ՍՊԸ	համապատասխանում է	Բավարար
2	«Շինտեխնիկա» ՍՊԸ	չի համապատասխանում	անբավարար
3	«Վիռա» ՍՊԸ	չի համապատասխանում	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. Ղեկավարվելով « Գնումների մասին » ՀՀ օրենքի 10-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով գնահատող հանձնաժողովը որոշեց

_____

(Արտակ Ստեփանյան)

- ✓ **«ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-23/04»** ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել « Ա Գ Շին » ՍՊԸ -ին որպես բավարար գնահատված և ամենացածր գին ներկայացրած մասնակից:
- ✓ Հաշվի առնելով այն հանգամանքը,որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից,ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին՝ անգործության ժամկետ սահմանելով 10 օրացուցային օր:
- ✓ Մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, գրությամբ՝ պետք է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի համայնքապետարան ներկայացնի պայմանագրի կատարման ապահովումը և իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը:

Նախագահ՝ _____ Ա. Ստեփանյան/ԳԱՊ/

Անդամներ՝ _____ Ս.Ավալյան/ԳԱ/

_____ Վ.Մխիթարյան/ԳԱ/

Քարտուղար՝ _____ Լ.Մարկոսյան/ԳՀ/